# ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ

## ԽՐԳ. ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

Նայեաց սիրով Հայրդ գթած
Ի քո ստեղծեալ գործս ձեռաց
Եւ զբանակս հրեշտակաց
Տուր պահապան մեզ տկարաց,
Փրկեա զանձինս ի փորձանաց,
Ի խաւարի շրջող դիւաց.
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Էին անեղ անսկզբան,
Ծնունդ անճառ Որդի և Բան,
Որ արարեր զտիւ գործոյ
Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ,
Տուր ի ննջել աչաց մարմնոյ,
Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ:
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Րաբունի հոգւոց բանաւորաց,
Աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց,
Ի փակել դրանց բնութեանց մարմնոց,
Լոյս տուր աչաց սրտից մերոց,
Ի գիշերաց առ քեզ կանխել,
Ընդ հրեղինացն օրհնաբանել.
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Սուրբդ սրբոց Երրորդութիւն,
Զմեզ մաքրեա քեզ բնակութիւն.
Շնորհեա ընդ մանկանցն առագաստի
Հանգչել ընդ քեզ ի յանկողնի.
Տուր զհայցուած բարեկամին
Զփոխ երից նկանակին.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Երևելի լոյս ստեղծեր
Զտիւ և զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ, Տէր, ի գիշերի
Զճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աջ քո հովանի.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ,
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ,
Զմիտս բոցով քո վառեսցէ.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց,
Ի զգայական ծածկեալ լուսոյ,
Որ վասն մեր եղար ի գբի
Եւ ննջեցեր ի տապանի,
Առ մեզ ննջեա արթուն բնութիւն,
Հերքեա զչարին ներգործութիւն.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տուցուք քեզ փառս անլռելի:

Էիդ լուսոյ անստուերի
Պաղատանօք կամք առաջի,
Որ փակեալ դրամբք յերեկոյին
Երևեցար մետասանին,
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք,
Տէր և Աստուած զքեզ դաւանեմք.
Եկ և առ մեզ յերեկոյիս,
Եւ տուր զողջոյն քո ի հոգիս:

Րամեալքս զքեզ, Տէր, աղաչեմք,
Մեզ յօգնութիւն նայեա հայցեմք,
Պահապանդ Իսրայէլի,
Անձանց մերոց լեր հովանի,
Օթեւ առ մեզ խաղաղարար
Եւ ննջեսցուք անխռովաբար.
Զի ընդ առաւօտս կանխեսցուք
Օրհնել զքեզ ընդ Հօր Հոգւով:

Գոչման փողոյն Գաբրիէլի,
Որ ի վերջնումն գիշերի,
Լսել արա զմեզ արժանի,
Եւ աջակողմն օդեաց դասի,
Անշէջ վառեալ լոյս լապտերաց,
Ըստ իմաստուն հինգ կուսանաց.
Զի ընդ փեսայիդ ի յառագաստ
Հարսունք հոգւով մտցուք ի փառս:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

